

Յանկարծառիս դժբախտութիւններն անմիջական օգնութիւններու կկարօտին, եւ աս ալ հարուստներու գործն եւ պարտքն է. ժողովուրդն չկրնար ըսել սովեալներուն. սպասեցէ՛ք, մի՛ մեռնիք, մինչեւ որ մենք մեր մէջ դրամ հաւաքենք եւ ձեզի դրկենք:

Այս ճշմարտութեան չեն ուզեր համոզուիլ մեր հարուստներէն ոմանք:

11 Հոկտեմբեր

Այսօր սրբազան Պատրիարքին անուան տօնախմբութիւնն ըլլալով՝ նորին Սրբազնութիւնը բազմաթիւ այցելութիւններ ընդունեց պատրիարքարան: Վարչութեան անդամները, երեսփոխանները, շատ մը քահանաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ փութացին այցելութիւն տալ նորին Սրբազնութեան, որ թեպէտեւ տկար՝ ամենքն ընդունեց եւ երեկոյին ուշատեն հազիւ կրցաւ Պատրիարքարանէն ելնել:

12 Հոկտեմբեր

Լրագրի մը մէջ կկարդամ.

«Խորէն եպիսկոպոսը հանքային ջուրերը գնացեր է իւր առողջութիւնը դարմանելու համար»:

Առողջութիւնէն վնաս տեսած է արդեօք, որ զայն դարմանելու համար հանքային ջուրերը գնացած է:

Գիտէինք որ առողջութիւն ձեռք բերելու համար հանքային ջուրեր կ'երթան, բայց զայն դարմանելու համար ջուրեր երթալն առաջին անգամն է որ կ'լսեմ:

13 Հոկտեմբեր

Արմաշու վանքին վանահայրը յիշեալ վանքին մէջ երկրագործական վարժարան մը հիմնել կ'փափաքի:

Կը շնորհաւորենք գերապատիւ վանահօր այս փափաքն եւ անոր իրացման համար արդէն երկու մոմ վառեցինք այսօր:

Նորին գերապատուութիւնը շատ փափաքներ ունէր ժամանակաւ յիշեալ վանքին վրայ, որ վերջապէս կործանման վիճակին հասաւ: Կ'փափաքինք, որ այս անգամ ալ երկրագործական վարժարան բանալու փափաքով ախոռի չվերածէ զայն: